ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Բյուրավան համայնք ,Հովի. Շիրազի N 10,
էլ. փոստ՝ Byuravanigyuxapetaran@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

N 19 - Ն 05 դեկտեմբերի 2012 թվականի

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի և վճարների մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

Բյուրավան համայնքի ավագանին
որոշում է.

Բյուրավան համայնքի վարչական տարածքում 2013թ.-ի համար սահմանել Տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական տների,ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար --- 5000դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար --- 4000դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար ---- 4000դրամ.

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ---- 6000դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 1000դր.

դ/20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 2000դր.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման, վերականգնման , արդիականացման ,աշխատանքների համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա/ չի նախատեսվում կցակառույցների ,վերակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն --- 1000 դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման ,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքների նախատեսվում է նաև կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերը կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է --- 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1. ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 2500 դրամ

2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ համար՝ - 2500 դրամ

5.Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար -- 350 դրամ.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է --150000դրամ :

գ/ Խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 30000 դրամ:

6. Համայնքում աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու համար մասնակցության վճար սահմանել -- 2000 դրամ :

1, 2, 3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը :

Ավագանու անդամներ՝

Գեղամ Մալխասյանը

Հենրիկ Հովհաննիսյանը

Շահանդուխտ Մնացականյանը

Պավլուշա Ղազարյանը

Վրեժ Խաչատրյանը

Վահե Գևորգյանը

Վալերի Լևոնյանը

ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / Գ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/